Տարածքային կառավարման հայեցակարգ

Բովանդակություն

I. Հայեցակարգի մշակման անհրաժեշտությունը 2

II. Տարածքային կառավարման մարմինների ինստիտուցիոնալ կազմակերպման միջազգային փորձը 5

III. Տարածքային կառավարման արդի խնդիրները և դրանց լուծման ուղիները 9

IV. ՀՀ մարզերում պետական կառավարման համակարգի ներկա կառուցվածքը և առաջարկվող փոփոխությունները 11

V. Հայեցակարգային լուծումները 22

VI. Մարզպետի գործառույթների նկարագիրը համակարգային փոփոխություններից հետո 24

Հավելված 1. Տարածքային մարմինների գործառույթների գծապատկեր 28

Հավելված 2. Տարածքային հիմնադրամների կառուցվածք 29

1. Հայեցակարգի մշակման անհրաժեշտությունը

1. Վերջին տարիներին տարածքային կառավարման բնագավառին առնչվող օրենսդրական և կառավարման գործընթացներում տեղի են ունեցել մի շարք փոփոխություններ: Ընդունվել են Հայաստանի Հանրապետության սահմանադրական փոփոխությունները, Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությունը, ընթացքի մեջ է համայնքների խոշորացման գործընթացը: Դրանք էապես փոփոխում են տարածքային կառավարման նպատակները, տրամաբանությունն ու կառուցվածքը:

2. Սույն հայեցակարգի նպատակը՝ նշված փոփոխություններին համապատասխան տարածքային կառավարման համակարգի նկարագրությունն է, որը հիմք կհանդիսանա հետագա օրենսդրական և կառուցվածքային փոփոխությունների համար:

3. 2016 թվականի հուլիսի 29-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունեց Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն), որի հիմնական նպատակը մարզերի մրցունակության բարձրացումն է: Ռազմավարության առանցքային խնդիրներից մեկը տարածքների համաչափ զարգացումն է՝ հատուկ ուշադրություն դարձնելով թույլ զարգացած տարածքներին ու սահմանամերձ համայնքներին: Ռազմավարության կարևորագույն նպատակներից է նաև տարածքային զարգացման պլանավորման ու իրականացման գործընթացների արդյունավետության աճը՝ տարածքային ու տեղական դերակատարների առավել ակտիվ մասնակցության ապահովման միջոցով:

4. Ռազմավարությամբ մատնանշված խնդիրների լուծման կարևոր նախապայմաններից մեկը տարածքային կառավարման արդյունավետ համակարգն է: Գործող տարածքային կառավարման համակարգը նպատակաուղղված է առավելապես կառավարության քաղաքականության իրականացմանը մարզերում՝ գործադիր իշխանության տարածքային ծառայությունների գործունեության համակարգման միջոցով: Մարզերի տնտեսական զարգացման հիմնական լծակները և պատասխանատվությունը

կենտրոնացած են ոլորտային նախարարություններում և պետական աջակից հիմնադրամներում, իսկ տնտեսական և սոցիալական զարգացման ցուցանիշների կատարման առումով պատասխանատվությունը դրված է տարածքային կառավարման մարմինների վրա:

5. Տարածքային կառավարման հարաբերությունների վերանայման անհրաժեշտությունը բխում է նաև 2015 թվականին տեղի ունեցած սահմանադրական փոփոխություններից: Սահմանադրական նոր իրողությունները, մասնավորապես՝ խորհրդարանական կառավարման համակարգին անցումը, պահանջում են մարզերում պետական կառավարման հարաբերությունների օրենսդրական կարգավորում: Հետևաբար, վերանայման կարիք ունեն նաև տարածքային կառավարման հարաբերությունների կարգավորման իրավական հարաբերությունները:

6. Մյուս ազդեցիկ գործոնը համայնքների խոշորացման գործընթացն է: Տեղական իշխանությունների կարողությունների բարձրացմանը զուգընթաց հարկ է նաև նրանց վերապահել նոր լիազորություններ: Վերոնշյալը պահանջում է ինչպես տարածքային կառավարման մարմինների և համայնքների միջև հարաբերությունների նոր համակարգի ձևավորում, այնպես էլ մարզային իշխանությունների կողմից իրականացվող մի շարք գործառույթների փոխանցում տեղական ինքնակառավարման խոշորացված միավորներին:

7. Ազգային և անդրազգային մակարդակում տարածքների դերի բարձրացման կարևորումը բնորոշ է նաև այլ երկրներին և վերազգային միավորումներին: Եվրոպական միությունում տարածաշրջանների դերի բարձրացման վկայությունն արտահայտվեց «Ռեգիոնալ ինքնավարության» հելսինկյան դեկլարացիայի ընդունմամբ: Եվրոպայի Խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կողմից ընդունված մի շարք փաստաթղթերում տրվում է տարածաշրջանի հետևյալ սահմանումը. «Տարածաշրջան է կոչվում այն տարածքը, որն աշխարհագրական տեսանկյունից հստակ ամբողջություն է կամ հանդիսանում է տարածքների համասեռ համալիր, որոնք ստեղծում են փակ ամբողջություն, որոնց բնակչության համար բնութագրական են ընդհանուր տարրերը, այդ թվում՝ որոշ հատկանիշներ մշակութային, սոցիալական և տնտեսական առաջընթացի խթանման

համար»: Կարևոր է նաև ի նկատի ունենալ այն հանգամանքը, որ խարտիան մարզը (տարածաշրջանը) բնութագրում է իբրև ինքնաբավ համապարփակ համալիր:

8. Եվրոպական հանրային կառավարման համակարգում տարածաշրջանը (մարզը) պետական քաղաքականության ներգործության տարածքային կառավարման օբյեկտից վերածվում է տարածքային զարգացման գործառույթի իրացման գործառույթները կրող աշխարհագրական միավորի, իսկ վերջինիս կառավարիչները (տեղական դերակատարների հետ միասին) ներգրավվում են միասնական ցանցում, որի հիմնական առաքելությունն է դառնում **տարածքային զարգացման** (ՀՆԱ, մարդկային կապիտալ, համայնքային կարողություններ) գործառույթի ապահովումը:

2. Տարածքային կառավարման մարմինների ինստիտուցիոնալ կազմակերպման միջազգային փորձը

9. Միջազգային փորձը ցույց է տալիս, որ առկա է տարածքային կառավարման սուբյեկտների (ռեգիոնների) առանձնացման 4 բաղադրիչ

1. պատմական.

2. մշակութային և էթնիկ.

3. վարչական և քաղաքական.

4. տնտեսական:

Նույն տարածքային միավորը կարող է ներառել մի քանի բաղադրիչներ:

10. ԵՄ անդամ երկրներում ռեգիոնների ձևավորման հիմքում առանցքային է նրա բնակչության թվակազմը: Ռեգիոնալ կառավարման տեսանկյունից արդյունավետ է համարվում 300 հազար և ավելի բնակչություն ունենալը:

2.1 Տարածքային կառավարումը Ալբանիայում

11. 2000թ. կառավարության կողմից նախաձեռնված հանրային կառավարման բարեփոխումների արդյունքում տարածքները տրոհվեցին 12 ռեգիոնների (քարկու), որոնք հանդես են գալիս իբրև ապակոնցենտրացված տարածքային միավորներ: Քարկի միջին բնակչությունը կազմում է 250,000 մարդ: Նրանց լիազորությունների տիրույթում են գտնվում տարածքային պլանավորման, ռեգիոնալ շահերին ուղղված գործողությունների համակարգման, կառավարության և համայնքների կողմից վերջիններիս փոխանցված կամ պատվիրակված լիազորությունների իրականացման գործառույթները:

12. Տարածքային զարգացման ծրագրերի արդյունավետության նպատակադրումից ելնելով կառավարության կողմից ձևավորվել են 4 ռեգիոնալ զարգացման գոտիներ: Տարածքային բաղադրիչ պարունակող բոլոր ծրագրերն իրականացվում են գոտիներում ձևավորված 4 ռեգիոնալ զարգացման գործակալությունների միջոցով: Նոր

բարեփոխումներով նախատեսվում է ստեղծել 4 ռեգիոններ՝ ԵՄ ծրագրերի և տարածքային ներդրումային քաղաքականության համակարգման նպատակով:

13. Տարածքային իշխանությունները ձևավորվում են անուղղակի եղանակով՝ ընտրված կոմունալ և մունիցիպալ ներկայացուցիչներից, մունիցիպալիտների քաղաքագլուխներից և համայնքային խորհրդի ղեկավարներից:

14. Գործադիր իշխանությունը իրականացնում է պրեֆեկտը, որը նշանակվում է կառավարության կողմից:

2.2 Տարածքային կառավարումը Լեհաստանում

15. Լեհաստանը բաժանված է 16 պրովինցիաների, որոնք կոչվում են Վոիվոդաններ: Տարածքային իշխանությունը կիսվում է երեք մարմինների միջև՝ կենտրոնական կառավարության կողմից նշանակված կառավարչի (վոիվոդի) (հաճախ քաղաքական նշանակում է), ընտրված ներկայացուցիչների սեյմիկի և գործադրի միջև, որը կոչվում է մարզալեկ:

16. Վոիվոդները նշանակվում են վարչապետի կողմից, ներկայացնում են կենտրոնական կառավարությունը, համակարգում ոստիկանության, հրշեջ ծառայության, անձնագրերի, միգրացիոն և զանազան տեսչական մարմինների աշխատանքը, պատասխանատու են կենտրոնական կառավարության գույքի պահպանության համար, ինչպես նաև հսկում են տեղական իքնակառավարման մարմինների գործունեությունը:

17. Սեյմիկն ընտրվում է 4 տարի ժամկետով: Լիազորությունների տիրույթում են գտնվում Վոիվոդայի բյուջեի հաստատման, տարածքային զարգացման ծրարգրի ընդունման և մարզալեկի ընտրության հարցերը: Մարզալեկը Վոիվոդայի գործադիր մարմինն է, որն իրականացնում է բյուջետային ծախսերը, կառավարում և բաշխում է ԵՄ կողմից տրամադրվող զարգացման ապահովմանն ուղղված միջոցները:

2.3 Տարածքային կառավարումը Բուլղարիայում

18. Բուլղարիան ունիտար պետություն է տարածքային ապակոնցենտրացված վարչակազմով: 1999 թվականին վարչատարածքային բարեփոխումներով վերադարձրել է

28 ռեգիոնների (օբլոստ) բաժանման համակարգը: Ռեգիոնների միջին բնակչությունը կազմում է 250,000 մարդ: Մինչ այդ կտրուկ կրճատել էր ռեգիոնների թիվը՝ այն հասցնելով 13-ի: Ռեգիոնալ իշխանությունը համակարգում է պետական մարմինների աշխատանքը, պահպանում և պաշտպանում է պետական սեփականությունը, իրականացնում է վարչական և իրավական հսկողություն տեղական ինքնակառավարման և պետական տարածքային մարմինների գործունության նկատմամբ: Յուրաքանչյուր ռեգիոնի ղեկավար նշանակվում է կենտրոնական կառավարության կողմից: Ռեգիոնալ որևէ այլ մարմին առկա չէ: Ռեգիոնալ իշխանությունները տարածքային զարգացման ծրագրերի իրականացման գործընթացում անմիջական մասնակցություն չունեն: Ծրագրերը իրականացվում են ճյուղային նախարարությունների կողմից, որոնց կառավարման խորհուրդներում կարող են ընդգրկվել ռեգիոնալ ներկայացուցիչներ:

2.4 Տարածքային կառավարումը Խորվաթիայում

19. Խորվաթիան բաժանված է 21 տարածքային միավորների (զուպանյե), որոնց միջին բնակչությունը կազմում է 200000 մարդ: Զուպանյեների գործունեության ոլորտն ընդգրկում է կրթությունը, առողջապահությունը, գոտիավորումը և տարածքային պլանավորումը, տնտեսական զարգացումը, տրանսպորտը և տրանսպորտային ենթակառուցվածքները: Զուպանյեի օրենսդիր մարմինը՝ Ասամբլեան, ձևավորվում է 4 տարի ժամկետով՝ ուղղակիորեն ընտրված ներկայացուցիչներից: Պրեֆեկտը ընտրվում է Ասամբլեայի կողմից:

2.5 Տարածքային կառավարումը Լատվիայում

20. 1995 թվականին սկիզբ առած տեղական կառավարման բարեփոխումները, որոնք մոդիֆիկացվեցին 2000 թվականին ԵՄ պարտավորությունների ստանձման հանգամանքով, ստեղծեցին 10 շրջաններ (ապրիկիտիս): Վարչատարածքային միավորների և նրանց սահմանների համաձայն շրջանները բարձրագույն տարածքային միավորներն են, որոնք կազմված են համայնքներից և ձևավորվում են սոցիալական, տնտեսական և էթնոմշակութային շահերի համընդհանրացման հիման վրա:

21. Շրջանների բնակչության միջին թվականը կազմում է 350000 մարդ: Ապրիկիտիսի կառավարչին և նրա տեղակալին նշանակում է կառավարությունը: Առանցքային դերակատարումը պատկանում է Ռեգիոնալ զարգացման խորհդին, որը ձևավորվում համայնքնապետերից:

22. Խորհուրդը նպաստում է տնտեսական բարեկեցության, մշակութային-կրթական, հիվանդանոցների, սոցիալական պաշտպանությանը, գործազրկությանը, շրջակա միջավայրին, հատուկ այգիների, սպորտի, տարածքային զարգացման և գյուղանտեսությանը առնչվող քաղաքականության իրագործմանը:

23. Ռեգիոնալ զարգացման քաղաքականություն իրականացումը ունի հետևյալ պատկերը՝



2.6 Տարածքային կառավարումը Էստոնիայում

24. Էստոնիան ունիտար պետություն է, որտեղ տեղերում կառավարումը կազմակերպվում է ինքնակառավարվող մարմինների միջոցով: Էստոնիայի համայնքները տեղական ինքնակառավարման միակ մակարդակն են: Վերջիններս չունեն ռեգիոնալ իշխանություններ: Պետական ծրագրերն իրականացվում են ճյուղային նախարարությունների կողմից անմիջապես կամ պատվիրակվում են համայնքներին (կախված ծրագրի ազդեցությունից և գումարի չափից):

2.7 Տարածքային կառավարումը Ռումինիայում

25. Ռումինիան բաղկացած է տարածքային երկու մարմիններից՝ շրջաներից (ժուդետ) և զարգացման ռեգիոններից: Ժուդետն իր մեջ պարունակում է տեղական ինքնակառավարման և պետական կառավարման դուալիզմը: Ժուդետի խորհուրդը ձևավորվում է ուղղակիորեն ընտրված ներկայացուցիչներից և ընտրում իր կառավարչին:

26. Յուրաքանչյուր ժուդետ ունի նաև իր կառավարության կողմից նշանակված պրեֆեկտը: Վերջինս իրականացնում է իրավական հսկողություն ժուդետի կողմից ընդունված իրավական ակտերի նկատմամբ և վերահսկում ապակոնցենտրացված պետական լիազորությունների կատարումը: Ժուդետը ապահովում է տնտեսական, կրթական, տարածքային տրասնպորտի, շրջակա միջավայրի, երկրորդային կրթության իրականացումը, ինչպես նաև պատասխանատու է տարածքային պլանավորման համար:

27. Յուրաքանչյուր զարգացման ռեգիոն ներառում է մի քանի ժուդետ: Բաղկացած է ռեգիոնալ զարգացման խորհրդից, պրեֆեկտներից, ռեգիոնալ զարգացման կառավարչից, իսկ հիմնական խնդիրն է՝ ապահովել ԵՄ ստանդարտներին համապատասխան տարածքային վիճակագրությունը, դրա ծրարգավորումը, ինդեքսավորումը, ինչպես նաև ԵՄ և ազգային հիմնադրամների միջոցների բաշխումը՝ տարածքային միավորներին:

3. Տարածքային կառավարման արդի խնդիրները և դրանց լուծման ուղիները

28. Հայաստանում տարածքային կառավարման համակարգի հիմնական մարտահրավերները նկարագրված են ստորև՝

1) Դեռևս մշակված չեն մարզերի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված թիրախավորված կառավարման օպտիմալ բաղադրիչները և մշտադիտարկման չափորոշիչները.

2) Առանցքային խնդիր է մարզային իշխանությունների և ոլորտային նախարարությունների ու պետական հիմնադրամների միջև լիազորությունների բաշխման հարցը.

3) Մարզի բնակչությունը պասիվ դերակատար է մարզային խնդիրների լուծման գործընթացում: Անհրաժեշտ է ձևավորել կառավարման միասնական համակարգ, որտեղ ներգրավված կլինեն ինչպես կենտրոնական կառավարության և մարզային իշխանությունների, այնպես էլ տեղական իշխանությունների ներկայացուցիչները.

4) Մարզային ռազմավարական ծրագրերի իրականացման գործընթացում էական է ինքնուրույնության և բավարար միջոցների տիրապետման հարցը: Ամբողջական ֆինանսական կախվածությունը կենտրոնից նվազեցնում է մարզային դերակատարների անկախությունը և բարձրացնում կենտրոնական կառավարության ազդեցության մակարդակը որոշումների ընդունման գործընթացում: Մարզային ծրագրերի իրականացումը պետք է հենվի երկու փոխկապակցված սկզբունքների վրա՝ պատասխանատվության և ֆինանսական ինքնուրույնության:

29. Մարզային ծրագրերի իրականացման առաջին՝ պատասխանատվության սկզբունքի էությունը կայանում է իշխանության տարածքային մարմինների կողմից իրենց իրավասության սահմաններում մարզում սոցիալ-տնտեսական քաղաքականության մշակման ու վարման բոլոր հարցերի վերաբերյալ որոշումների կայացման հնարավորության մեջ: Սա ենթադրում է տարածքային նշանակության որոշումների կայացման գործընթացի տեղափոխում կենտրոնից դեպի մարզեր:

30. Մարզային ծրագրերի իրականացման երկրորդ՝ ֆինանսական ինքնուրույնության սկզբունքը ենթադրում է տարածաշրջանում այնպիսի ֆինանսական բազայի ձևավորում, որը կկարողանա ապահովել վերը նշված որոշումների իրագործման հնարավորությունը:

4. ՀՀ մարզերում պետական կառավարման համակարգի ներկա կառուցվածքը և առաջարկվող փոփոխությունները

31. Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» N ՆՀ-728 հրամանագրով Հայաստանի Հանրապետության մարզպետներին վերապահված գործառույթները կարելի է դասակարգել երեք խմբում՝ գործառնական կարևորությունը շեշտելու համար՝

1) ընդհանուր բնույթի գործառույթ.

2) կառավարման և համակարգման գործառույթներ.

3) աջակցության և ընթացիկ գործառույթներ:

32. Մարզպետի ընդհանուր բնույթի գործառույթներն են՝

1) օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը.

2) խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել կառավարության նիստերին.

3) սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի միջոցով կառավարության և վարչապետի քննարկմանն է ներկայացնում վերջիններիս իրավասությանը վերապահված հարցերը.

4) համագործակցում է հանրապետական գործադիր մարմինների հետ և դրանց քննարկմանն է ներկայացնում վերջիններիս իրավասությանը վերաբերող մարզին առնչվող հարցերը.

5) սահմանված կարգով նախապատրաստում և առաջարկություններ է ներկայացնում կառավարություն՝ մարզում պետական կառավարման իրականացման համար պետական բյուջեից անհրաժեշտ ամենամյա հատկացումների վերաբերյալ.

6) սահմանված կարգով մասնակցում է պետական բյուջեի նախագծի, ինչպես նաև կառավարության տարածքային քաղաքականության մշակման աշխատանքներին.

7) ամենամյա հաշվետվություններ է ներկայացնում կառավարություն՝ իր գործունեության և մարզի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին, ընթացիկ հաշվետվություններ է ներկայացնում վարչապետին.

8) պարտադիր քննության է առնում հանրապետական գործադիր մարմինների կողմից մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և դրանց ղեկավարների աշխատանքի վերաբերյալ առաջարկությունները և սահմանված ժամկետում այդ մարմիններին տեղեկացնում ձեռնարկված միջոցների մասին.

9) ընդհանրացնում է օրենսդրության կիրառման պրակտիկան, օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում կառավարություն.

10) իր իրավասության սահմաններում միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների իրավունքները և ազատություններն ապահովելու համար.

11) օրենսդրությամբ սահմանված կարգով վերացնում կամ կասեցնում է մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարների՝ օրենսդրությանը հակասող իրավական ակտերը.

12) օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում միջոցներ է ձեռնարկում մարզի տարածքում պետական սեփականության պահպանության և արդյունավետ օգտագործման ուղղությամբ.

13) սահմանված կարգով տեղեկություններ է տալիս համապատասխան հանրապետական գործադիր մարմնին իր կողմից տվյալ բնագավառում կառավարության տարածքային քաղաքականության իրականացման վերաբերյալ.

14) օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկում է պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների կատարման ընթացքը և պարտադիր լիազորությունների կատարումը.

15) իրականացնում է օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ.

16) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով մարզպետարանի աշխատակազմում պաշտոնի

նշանակում և պաշտոնից ազատում է քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին.

17) պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթման, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ կառուցապատման դեպքերի հայտնաբերման վերաբերյալ հաղորդումներ է ներկայացնում դատախազություն՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

33. Մարզպետի կառավարման և համակարգման, ինչպես նաև աջակցության և ընթացիկ բնույթի գործառույթներն են՝

Կառավարման և համակարգման գործառույթ	**Աջակցության գործառույթ**	**Ընթացիկ գործառույթներ**
Ֆինանսների բնագավառ		
- Տնօրինում է պետական բյուջեով մարզին հատկացված միջոցները, վերահսկում դրանց նպատակային օգտագործումը. - Վերահսկում է պետական բյուջեից համայնքներին տրվող միջոցների օգտագործման նպատակայնությունը:	- Մեթոդական օգնություն է ցուցաբերում համայնքներին՝ տեղական բյուջեների կազմման ընթացքում:	Սահմանված կարգով մշակում և կառավարության քննարկմանը առաջարկություններ է ներկայացնում պետական բյուջեի նախագծի՝ մարզին վերաբերող հատվածի, ինչպես նաև մարզի համայնքների բյուջեներին պետական բյուջեից հատկացումների վերաբերյալ.
Քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության բնագավառ		
- Սահմանված կարգով կազմակերպում է մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմումը և ներկայացում կառավարության հաստատմանը. - եզրակացություն է տալիս		սահմանված կարգով առաջարկություններ է ներկայացնում կառավարություն մարզի համայնքների վարչական սահմանների փոփոխման վերաբերյալ

հանրապետական տարածքային զարգացման ու տարաբնակեցման նախագծերի և ուրվագծերի վերաբերյալ. - իր իրավասության սահմաններում կազմակերպում է բնակարանային և այլ շինարարություն, իրականացնում է կապիտալ շինարարության և կապիտալ վերանորոգման պատվիրատուի գործառույթներ, քաղաքաշինական գործունեության հսկողություն, միջոցներ է ձեռնարկում ապօրինի շինարարության կանխման, կասեցման և վերացման ուղղությամբ. - համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում, իր իրավասության շրջանակում, սահմանված կարգով համակարգում է կառուցապատումը. - կազմակերպում և վերահսկում է մարզային ենթակայության ջրմուղ-կոյուղու, ջրերի մաքրման և այլ կոմունալ կազմակերպությունների աշխատանքը. - կազմակերպում է աղբի ու թափոնների վերամշակումը:		
Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառ		
- Կազմակերպում է միջհամայնքային	- աջակցում է հանրապետական	

հասարակական տրանսպորտի աշխատանքը, մարզային ենթակայության տրանսպորտային կազմակերպությունների գործունեությունը. - կազմակերպում է մարզային նշանակության ճանապարհների, կամուրջների, թունելների, այլ ինժեներական կառույցների շինարարությունը, պահպանումը և շահագործումը.	նշանակության ճանապարհների շինարարության, պահպանման ու շահագործման աշխատանքների կազմակերպմանը:	
Գյուղատնտեսության և հողօգտագործման բնագավառ		
- օրենսդրությամբ սահմանված կարգով տիրապետում և օգտագործում է համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերը. - օրենսդրությամբ սահմանված կարգով կազմում է մարզի հողային հաշվեկշիռը. - օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում մարզի տարածքում հողաշինարարության, հողօգտագործման և հողի պահպանման նկատմամբ, կանխում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը - վերահսկում է մարզի	- աջակցում է գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին, ագրարային ոլորտում տնտեսավարող այլ սուբյեկտներին՝ արտադրության կազմակերպման և զարգացման գործում.	- համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում իրականացնում է պատվիրատուի գործառույթներ. - մարզի հողերի օգտագործման սխեմաները սահմանված կարգով ներկայացնում է կառավարության հաստատմանը. - օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագրեր է կնքում հողի ու ամրակայված գույքի սեփականատերերի և (կամ) հողօգտագործողների հետ՝ մարզի

սահմանանիշերի և գեոդեզիական կետերի պահպանումը. - իրականացնում է մարզային նշանակության ոռոգման ցանցերի կառուցումը, պահպանումը և շահագործումը, միջոցներ է ձեռնարկում հանրապետական նշանակության ոռոգման համակարգերի նպատակային շահագործման ուղղությամբ. - համակարգում է գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների, մոլախոտերի դեմ պայքարի, կարանտինային պահանջների կատարման և ագրոկանոնների պահպանմանն ուղղված աշխատանքները. - համակարգում է մարզի տարածքում անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումների իրականացման և կենդանիների հիվանդությունների կանխման ու վերացման աշխատանքները - համակարգում է մարզի տարածքում ջրատնտեսական և ոռոգման կազմակերպությունների		տարածքում մարզային ենթակայության օբյեկտների կառուցման համար համապատասխան հողի ու ամրակայված գույքի օգտագործման և դրանց հետ կապված փոխհատուցումների վերաբերյալ.

գործունեությունը. - համակարգում է մարզի տարածքի սերմնաբուծական կազմակերպությունների, տոհմաբուծարանների և արհեստական սերմնավորման կայանների գործունեությունը:		
Կրթության բնագավառ		
- կազմակերպում է մարզային ենթակայության պետական ուսումնական հաստատությունների գործունեությունը, ապահովում պետական հանրակրթական ծրագրերի իրագործումը, իրականացնում ուսումնական հաստատությունների գործունեության վերահսկողությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված կարգերի. - կազմակերպում է մարզային ենթակայության կրթական հաստատությունների շենքերի կառուցումը, պահպանումն ու շահագործումը:		
Առողջապահության բնագավառ		
- իրագործում է պետական առողջապահական ծրագրերը, կազմակերպում մարզային ենթակայության պետական	- աջակցում է պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության մարմիններին՝	

առողջապահական հաստատությունների աշխատանքը, օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է բնակչության անվճար բուժօգնության իրականացումը, վերահսկում է ոչ պետական առողջապահական հաստատությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը. - մարզի տարածքում կազմակերպում և իրականացնում է հակահամաճարակային և կարանտինային միջոցառումներ, կազմակերպում է սանիտարահիգիենիկ միջոցառումներ վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով. - կազմակերպում է մարզային ենթակայության առողջապահական հաստատությունների շենքերի կառուցումը, պահպանումն ու շահագործումը:	բնակավայրերի ջրամատակարարման աղբյուրների, բնակելի շենքերի, դպրոցների և այլ օբյեկտների սանիտարական վիճակի նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս.	
Սոցիալական ապահովության բնագավառ		
- իրագործում է բնակչության պետական սոցիալական ապահովության ծրագրերը,վերահսկում է մարզի տարածքում սոցիալական	- աջակցում է գործազուրկների հաշվառման և բնակչության զբաղվածության հետ կապված խնդիրների	- Կազմակերպում է մարզային ենթակայության սոցիալական ապահովության հաստատությունների

ապահովության ոչ պետական կազմակերպությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը. - կազմակերպում է սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության հաշվառումը, համակարգում է մարդասիրական օգնության բաշխումը. - կազմակերպում է մարզային ենթակայության սոցիալական ապահովության հաստատությունների շենքերի կառուցումը, պահպանումն ու շահագործումը.	լուծմանը. - աջակցում է պետական կենսաթոշակների և նպաստների նշանակման ու վճարման կազմակերպման աշխատանքներին. - աջակցում է սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների գործունեությանը. - աջակցում է կադրերի վերապատրաստման ու վերաորակավորման աշխատանքների կազմակերպմանը:	և կազմակերպությունների գործունեությունը
Մշակույթ և սպորտ		
- վերահսկում է մարզի տարածքում ոչ պետական մշակութային և սպորտային կազմակերպությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը. - իրականացնում է օրենքով սահմանված լիազորություններ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման ուղղությամբ. - կազմակերպում է մարզային ենթակայության մշակութային և սպորտային օբյեկտների կառուցումը, հանգստի գոտիների	- նպաստում է ավանդական ազգային ծեսերի վերականգնմանն ու տարածմանը. - համագործակցում է մարզի տարածքում գործող պետական գրանցում ունեցող կրոնական կազմակերպությունների հետ:	- կազմակերպում է մարզային ենթակայության մշակութային և սպորտային հաստատությունների աշխատանքը, մարզային մշակութային և սպորտային, ինչպես նաև պետական, ազգային ու այլ տոների հետ կապված զանգվածային միջոցառումներ,

ստեղծումը, պահպանումն ու շահագործումը.		
Բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառ		
- մարզի տարածքում վերահսկում է բնապահպանական օրենսդրության կատարումը և խախտման փաստերի վերաբերյալ տեղյակ է պահում համապատասխան մարմիններին.	- աջակցում է արգելոցների, արգելավայրերի, հատուկ պահպանվող գոտիների պահպանությանը և օգտագործմանը, որսագողության, ապօրինի ձկնորսության, ծառահատումների դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացմանը. - համագործակցում է բնապահպանական խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների , ինչպես նաև քաղաքացիների հետ:	- մասնակցում է բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրերի մշակմանը և իր լիազորությունների շրջանակներում ապահովում է դրանց իրականացումը մարզի տարածքում.
Առևտուր և սնունդ		
	- միջոցներ է ձեռնարկում մարզի տարածքում առևտրի, հանրային սննդի և սպասարկման ոլորտի տնտեսավարող սուբյեկտների գործունեության ընդլայնման և արդյունավետության ապահովման ուղղությամբ	

34. Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման և վարչական հսկողության ոլորտներում ՀՀ

մարզպետներին վերապահված գործառույթները կրում են կառավարման և համակարգման բնույթ, որոնք կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝

Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման ոլորտ		
Կառավարման և համակարգման գործառույթ	Աջակցության գործառույթ	Ընթացիկ գործառույթներ
- Տարերային և տեխնոլոգիական աղետների կանխարգելման միջոցառումների համակարգում. - Համայնքներում զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների անցկացման կազմակերպում: - Քաղաքացիական պաշտպանության համակարգի կազմակերպում արտակարգ իրավիճակներում:	-	-
Վարչական հսկողության ոլորտ		
- Իրավական հսկողություն համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների նկատմամբ: - Մասնագիտական հսկողություն համայնքի ղեկավարի՝ պետության պատվիրակած լիազորությունների նկատմամբ:		

35. Մարզպետների գործառույթների ընդհանուր նկարագրից ակնհայտ է, որ մարզպետները չունեն տնտեսական զարգացման ապահովման համար անհրաժեշտ գործիքակազմ: Սա հաստատում է այն թեզը, որ տարածքային կառավարումը ուղղված չէ տարածքային զարգացմանը:

36. Լիազորությունների գերակշիռ մասը կապված է ուղղակի կառավարման և համակարգման հետ՝

1) համակարգում է տարբեր պետական և տեղական կառավարման մարմինների աշխատանքը համապետական միջոցառումների և արտակարգ իրավիճակների ժամանակ՝ զորավարժություններ, զորահավաք, տարերային կամ բնապահպանական աղետներ և այլն.

2) վերահսկում է ՏԻՄ-երի գործունեության՝ գործող օրենսդրությանը համապատասխանությունը, ինչպես նաև մարզպետի կառավարմանը հանձնված կրթական, առողջապահական, սոցիալական, մշակութային և այլ հաստատությունների աշխատանքը.

37. Մարզպետի գործառույթների մյուս խոշոր մասը վերաբերում է պետական գույքի կառավարմանը՝ կրթական, առողջապահական, սոցիալական և մարզային ենթակայության այլ հիմնարկների շենքերի կառուցում, վերակառուցում, պահպանում և այն:

38. Գործառույթների մի փոքր մասն էլ վերաբերում է աջակցմանը՝ ՏԻՄ- երի մեթոդական աջակցություն, գյուղատնտեսության զարգացման աջակցություն, բնապահպանական միջոցառումներին աջակցություն և այլն:

39. Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքը, մասնագետների ընտրությունը և ֆինանսական ռեսուրսների բաշխումը հիմնականում կապված են կառավարման գործառույթի հետ, իսկ աջակցման գործառույթին հատկացվում է մարդկային և ֆինանսական ռեսուրսների փոքր մասը:

40. Կարևոր է նշել, որ հրամանագրով մարզպետին վերապահված լիազորությունների որոշ մասը չի համապատասխանում առկա օրենսդրական կանոնակարգումներին:

5. Հայեցակարգային լուծումները

41. Հայեցակարգային լուծումների մշակման ժամանակ հաշվի են առնվել հետևյալ գործոնները՝

1) Հայաստանի զարգացման տարածքային անհամամասնությունները,

2) համայնքներում իրականացվող վարչատարածքային բարեփոխումների գործընթացը,

3) ներքին տարածաշրջանային ռեսուրսների լիարժեք ու հավասարակշռված օգտագործման հաշվին երկարաժամկետ զարգացման համար պայմանների ապահովման անհրաժեշտությունը:

42. Առաջարկվող լուծումներն են՝

1) **Մարզային խորհուրդի վերաձևավորում:** Մարզային խորհուրդը դառնում է մարզի զարգացման քաղաքականության հիմնական ուղղությունները կանխորոշող խորհրդակցական մարմին: Մարզի զարգացման խորհուրդը մարզի զարգացման հիմնադրամի կառավարման բարձագույն մարմինն է: Մարզի զարգացման խորհուրդը բաղկացած կլինի 15-ից 31 անդամից[1] (խորհրդի ձևավորման կարգը կսահմանվի օրենքով): Մարզային խորհրդի անդամների առնվազն 2/3 կլինեն տվյալ մարզի համայնքների ներկայացուցիչները: Սա բխում է ռեգիոնալ կառավարման եվրոպական փորձից, որը վկայում է, որ վարչատարածքային միավորումներում (նահանգներ, ռեգիոններ, շրջաններ և այլ) տարածքային կառավարման գործընթացին պետք է ներգրավեն նաև տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները, որոնք հանդես կգան իբրև փոխլրացնող մեխանիզմ մարզպետին՝ տարածքային կառավարման իրականացման գործընթացում: Մարզպետը կնախագահի մարզի զարգացման խորհրդի նիստերը: Մարզային զարգացման խորհրդի լիազորությունների տիրույթում կընդգրկվեն մարզային թեմատիկ ծրագրերի հաստատման, մարզային հիմնադրամների կողմից համայնքային ծրագրերի ֆինանսական միջոցների բաշխման նպատահարմարության որոշման, մարզերի զարգացման ռազմավարության ընդունման և այլ առացնքային հարցեր:

2) **Մարզային զարգացման հիմնադրամների ստեղծում:** Մարզային ներդրումային և տնտեսական այլ ծրագրերի ֆինանսավորման և իրականացման նպատակով մարզերում ձևավորվելու են մարզային հիմնադրամներ: Հիմնադրամի գործառույթների շրջանակում են լինելու ներդրումների ներգրավումը, դոնորների հետ տարվող աշխատանքը, գործարարության և գյուղատնտեսության աջակցումը, ներդրումային ծրագրերի պատրաստումը, իրականացումը և իրականացվող ծրագրերի մշտադիտարկումը: Մարզային հիմնադրամի բյուջեն ձևավորվելու է պետական, համայնքային և միջազգային

[1] Կախված մարզի համայնքների և դրանցում առկա բնակչության քանակից, ներկայացված համամասնությունները կարող են փոփոխվել:

կազմակերպությունների կողմից, ինչպես նաև այլ ֆինանսական աղբյուրներից ստացված միջոցներից: Մարզի զարգացման հիմնադրամը կներառի նաև ՓՄՁ ԶԱԿ- ի և ԳԱՀ- ի մարզային գործիքակազմը և միջոցները: Մարզի զարգացման հիմնադրամը ղեկավարում է տնօրենը, ում թեկնածությունը հաստատվում է մարզի զարգացման խորհրդում մարզպետի ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով ՀՀ վարչապետի հետ:

3) **Տարածքային սուբյեկտների գործառույթների և լիազորությունների ճշգրտում:** Մարզպետների գործառույթների շրջանակից աստիճանաբար դուրս կգան քաղաքացիներին ծառայություններ մատուցելուն ուղղված գործառույթները (այդ թվում՝ սոցիալական ապահովություն, անասնաբուժական ծառայություններ, մարզային ենթակայության ցանցային ենթակառուցվածքների կառավարում և այլն) և կընդգրկվեն տարածքային (մարզային) զարգացման ապահովմանն ուղղված հարցեր:

6. Մարզպետի գործառույթների նկարագիրը համակարգային փոփոխություններից հետո

43. Համակարգային փոփոխությունների նպատակը՝ մարզպետին գործիքակազմի, ռեսուրսների ու մեթոդների տրամադրումն է, որը կնպաստի զարգացման ու աջակցության բաղադրիչի ուժեղացմանը, ընդհուպ մինչև գերակա գործառույթ դառնալուն: Միաժամանակ համայնքների խոշորացման գործընթացով պայմանավորված կիրականացվեն քայլեր ապակենտրոնացման[2] և ապակոնցենտրացման[3] ուղղությամբ:

44. Համայնքներին կփոխանցվեն առնվազն հետևյալ գործառույթները՝

1) սոցիալական աջակցության տարածքային մարմինների կառավարում.

2) ներհամայնքային ճանապարհների կառուցում և պահպանում.

3) անասնաբուժական ծառայությունների ապահովում:

---

2 Կառավարությանը և վերջինիս տարածքային մարմիններին վերապահված իրավունքները և պարտականությունները ամբողջապես կամ մասնակիորեն փոխանցվում են տեղական ինքնակառավարման մարմիններին (լիազորությունների ամբողջական կամ մասնակի օտարում):

3 Կառավարությանը վերապահված իրավունքների և պատասխանատվությունների մի մասը փոխանցվում է կառավարության տարածքային մարմիններին:

44. Մարզպետի գործառույթներին կավելանան հետևյալները՝

1) մարզի ռազմավարական ծրագրերի կազմում, միջոցների հայթայթում, ծրագրերի իրականացում: Ծրագրերի հնարավոր ոլորտներն են՝ ձեռնարկատիրություն, զբոսաշրջություն, գյուղատնտեսության աջակցություն, համայնքային զարգացում, ենթակառուցվածքների զարգացում, բնապահպանական ծրագրեր և այլն.

2) պետական բյուջեից մարզերի սոցիալական ոլորտի զարգացմանը հատկացվող միջոցների մրցութային կարգով բաշխում, ծրագրերի իրականացման գնահատում և մոնիտորինգ.

3) մարզի տարածքում հանրապետական աջակից հիմնադրամների և մարմինների գործունեության համակարգում ՝ ՓՄՁ աջակցության, գյուղատնտեսության աջակցության, ենթակառուցվածքների կառուցման և պահպանման և այլ ուղղություններով:

45. Մարզպետի գործառնությունները կդասակարգվեն հետևյալ խմբերում՝

1) կառավարման, համակարգման և ընթացիկ գործառույթներ.

2) զարգացման և աջակցության գործառույթներ.

46. Մարզերի ընդհանուր բնույթի գործառույթները պահպանվելու են, միաժամանակ ապահովելով նրանց համապատասխանությունը գործող օրենսդրության պահանջներին:

47. Կառավարման և զարգացման բաղադրիչներն ըստ բնագավառների՝

Կառավարման, համակարգման և ընթացիկ գործառույթներ	**Զարգացման և աջակցության գործառույթներ**
Ֆինանսների բնագավառ	
- սահմանված կարգով մշակում և կառավարության քննարկմանը առաջարկություններ է ներկայացնում պետական բյուջեի նախագծի՝ մարզին վերաբերող հատվածի, ինչպես նաև մարզի համայնքների բյուջեներին պետական բյուջեից հատկացումների վերաբերյալ.	- Մեթոդական օգնություն է ցուցաբերում համայնքներին՝ տեղական բյուջեների կազմման ընթացքում:
Քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության բնագավառ	

- Օրենքով սահմանված կարգով ապահովում է մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերը ներկայացումը կառավարության լիազոր մարմնին: - Օրենքով սահմանված կարգով առաջարկություններ է ներկայացնում կառավարություն մարզի համայնքների վարչական սահմանների փոփոխման վերաբերյալ:	
Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառ	
- Կազմակերպում է միջհամայնքային հանրային տրանսպորտի աշխատանքը:	
Գյուղատնտեսության և հողօգտագործման բնագավառ	
- Կազմում է մարզի հողային հաշվեկշիռը:	- Աջակցություն գյուղատնտեսության զարգացմանը:
Կրթության բնագավառ	
- Մարզային ենթակայության պետական ուսումնական հաստատությունների կառավարում:	
Առողջապահության բնագավառ	
- Հակահամաճարակային և կարանտինային միջոցառումներ: - Մարզային ենթակայության առողջապահական հաստատությունների կառավարում:	
Սոցիալական ապահովության բնագավառ	
Մարզային ենթակայության	

սոցիալական ապահովության հաստատությունների կառավարում:	
Մշակույթ և սպորտ	
Մարզային ենթակայության մշակութային և սպորտային հաստատությունների կառավարում	Աջակցում է համայնքներին մարզային մշակութային և սպորտային ծրագրերի և միջոցառումների իրականացման գործում
Բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառ	
	- Աջակցում է բնապահպանական միջոցառումների իրականացմանը:
Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգում	
- Տարերային և տեխնոլոգիական աղետների կանխարգելման միջոցառումների համակարգում: - Համայնքներում զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների անցկացման կազմակերպում: - Քաղաքացիական պաշտպանության համակարգի կազմակերպում արտակարգ իրավիճակներում:	
Վարչական հսկողության բնագավառում	
- Մասնագիտական հսկողություն համայնքի ղեկավարի՝ պետության պատվիրակած լիազորությունների նկատմամբ:	- Պետական լիազորված մարմնի կողմից պատվիրակման դեպքում՝ իրավական հսկողություն համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների նկատմամբ:
Սոցիալ-Տնտեսական բնագավառ	- Աջակցում է մարզում

Իրականացնում է մարզում տնտեսական և այլ ենթակառուցվածքների զարգացման ծրագրեր:	գործարարության զարգացմանը տարբեր ծրագրերի իրականացման միջոցով, այդ թվում՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ և ԳԱՀ հիմնադրամների միջոցներով:

Հավելված 1. Տարածքային մարմինների գործառույթների գծապատկեր



Հավելված 2. Տարածքային հիմնադրամների կառուցվածք